# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# «ՇԱՔԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Հասցե Սյունիքի մարզ գ. Շաքի   Հեռ. 093 19 75 19   E-mail shaki @schools.am


«13» Հունվար 2022թ. N 383

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝
Է. Մարտիրոսյանին

Հարգելի պարոն Մարտիրոսյան

Ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13 ապրիլ 2013 թվականի N 396-Ն հրամանով՝ հաստատված «Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի» օրինակելի կարգի 12-րդ կետի դրույթով՝ տեղեկացնում եմ, որ Սյունիքի մարզի «Շաքիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում առաջացել է մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկով և հաստատության տարիֆիկացիոն ցուցակով նախատեսված մաթեմատիկա առարկայի ուսուցչի թափուր տեղ:

Կից ներկայացնում եմ հայտարարության տեքստը՝

Տնօրեն   Վ. Հարությունյան

# Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Շաքիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկա (19 դասժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի. Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում (Ձև 1)
2. Մեկ լուսանկար 3x4 չափի
3. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
4 Անձը հաստատող փաստաթուղթ
5. « Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում)
6. Ինքնակենսագրություն(Ձև 5)
7 Այլ պետությունների քաղաքացիները՝ Հ Հ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
8. Հ Հ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)
10 Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ.

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հունվարի 26-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 9.00 -ից 15:00 -ը բացի շաբաթ և կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022թ-ի փետրվարի 1 -ին ժամը 13:00 -ին, ՀՀ Սյունիքի մարզի Շաքիի միջնակարգ դպրոցում հասցե գ. Շաքի փ 8 շ.3·

Տեղեկությունների համար զանգահարել (093) 19 75 19 հեռախոսահամարով: